ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

05. 04. 2023թ. Սևան համայնք

2023թ. ապրիլի 5-ին ժամը 12.00-ին ,Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասինե ՀՀ օրենքի /21.06.2014թ: ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով /2-րդ քննարկում/ <<Գրին Սոլուշնս>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր, Լճաշեն, Գեղամավան համայնքների վարչական տարածքներում 110կՎ լարման սնող օդային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ երկրորդ հանրային քննարկումը:

Հանրային քննարկմանը ներկա էին գործունեության իրականացման վարչական տարածքների՝ համայնքների ղեկավարները, Ձեռնարկողի, <<ՀԷՑ>> ՓԲԸ-ի ներկայացուցիչները, բնակիչներ:

Ելույթ ունեցան՝

Հանրային քննարկումը բացեց Սևան համայնքի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Մեսրոպ Մկրտչյանը, ներկայացնելով հանրային քննարկման նպատակը, կարևորությունը և խոսքը փոխանցեց ,Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնԵՊՈԱԿ-ի մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանին:

Մեսրոպյանը ներկայացրեց նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացը, նշեց, որ հայտը համաձայն ,Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասինե ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի ենթակա է փորձաքննոթյան որպես Բ կատեգորիայի գործունեություն՝ երկու փուլով: Ներկայացրեց հայտի փորձաքննական գործընթացը, նշելով որ հայտը սահմանված կարգով ներկայացվել է համապատասխան գերատեսչություններին և նախարարության ստորաբաժանումներին՝ կարծիքների: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է:

Նախատեսվող գործունեության նախագիծը ներկայացրեց **ձեռնարկողի ներկայացուցիչ, նախագծող՝ Վահագն Թեպելիկյանը:** Մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեության տեխնիկան լուծումները՝ ենթակայանի և 26 հենակետերով ՕԳ-ի կառուցման ընթացակարգը: Նշեց, որ ՕԳ-ն կառուցվելու է ջերմոցային տնտեսության համար: Գործունեության տարածքի հողերը հիմնականում համայնքային են, հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, հողատեսքը արոտավայրեր: Ենթակայանի տարածքը գտնվելու է Լճաշեն համայնքում, որի հողերի նպատակային նշանակությունը պետք է փոխվի: Իսկ օդային գծերն անցնելու են Վարսեր և Գեղամավան բնակավայրերի վարչական տարածքներով:

Մ. Մկրտչյանը հարց բարձրացրեց անվտանգության գոտու և գյուղացիներին պատկանող հողային տարածքների հետ համընկման, օդային գծի ուղղության ճշտումների վերաբերյալ:

Վ. Թեպելիկյանը պատասխանեց, որ ընթանում է հենարանների տեղադրման հողերի սեփականաշնորհման գործընթացը, որի ավարտից հետո պարզ կլինի գյուղացիների հողերի հետ համընկնման հնարավորությունները: Պահպանվելու է անվտանգության գոտին՝ 20մ:

Վարսեր բնակավայրի ներկայացուցիչ, Սևան համայնքի ավագանու անդամ՝ Նվեր Սեդրակյանը նշեց, որ իրենց վարչական տարածքում որվելու է 4 հատ հենասյուն և պետք է հստակեցվի դրանց տեղադիրքերը:

Գեղամավանի վարչական ղեկավար Գագիկ Խաչատրյանը հարց բարձրացրեց գյուղացիների հետ պայմանավորվածության անհրաժեշտության մասին, քանի որ անվտանգության գոտու պահպանման դեպքում գյուղացիների հողօգտագործման տարածքների հետ խնդիրներ կառաջանան և իր կարծիքով կան գյուղացիների տարածքների հետ մի քանի համընկնումներ :

Վ. Թեպելիկյանը պատասխանեց, որ ընթանում են վերջնական սեփականաշնորհման աշխատաքները կադաստրի հետ և պարզ կլինի քանի հողամասի համընկնում կլինի: Եթե համընկնի, ապա գյուղացիների հետ կքննարկվեն և կգան համաձայնության:

Մ. Մկրտչյանը նշեց, որ պետք է անպայման հստակեցվեն ուղեգծերը, համաձայնեցվեն գյուղացիների հետ: Միաժամանակ հարց բարձրացրեց Զեռնարկողի կողմից համայնքին հնարավոր ֆինանսական աջակցության հնարավորությունների վերաբերյալ:

Թ. Նուրիջանյանը՝ հայտ մշակող ,ՆովալեՍՊԸ-ի ներկայացուցիչ, ներկայացրեց Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի վարչական տարածքում նախատեսվող 110կՎ լարման սնող օդային գծի կառուցման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները՝ շինարարության և շահագործման փուլերում: Նշեց, որ հայտում նախատեսված են վերջիններիս վրա հնարավոր ազդեցությունների կանխմանն ու մեղմացմանն ուղղված բնապահպանական միջոցառումները: Միաժամանակ կարևորեց Զեռնարկողի կողմից համայնքի սոցիալական խնդիրներին ուղղված հնարավոր ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը, որը հստակ կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվությունում:

Մ. Մկրտչյանը եզրափակեց հանրային լսումը, նշելով որ համայնքը դեմ չէ գործունեության իրականացմանը, հաշվի առնելով բնակավայրերի բնակիչների կարծիքները, նրանց հետ ունեցած համաձայնությունները: